նում է, իսկ դեպի բերանը դեպքով լայնանում։ Էշմիածնի կացինը մի փոքր երկար է (17,5 սմ)։ Կարապի կացնից, սակայն կոթառը նույնպես կախ է և համաչափ նույն երկարությունն ունի, ինչ որ Կարապինը։ Կարապի կացնի բերանը ավելի լայն է (5,4 սմ), քան Էշմիածնինը (4,5 սմ)։ Էշմիածնի կացինն իր արտաքին ձևով ավելի կապվում է Աբխազիայի գոյմեններում և Հյուսիսային Օսեթիայում հայտնաբերված կացինների հետ։ Այն արտակարգ նման է Հյուսիսային Օսեթիայում հայտնաբերված Կ. Բ. Օլշևսկու կոլեկցիայի կացնին[54]։ Ս. Բ. Կրուպնովը նշում է, որ բառ Բ. Ա. Կուֆտինի, ճիշտ նման կացին հայտնաբերվել է Կուբանյան կուրգաններում և գտնվում է Վիեննայի թանգարանում[55]։ Նման երկու կացիններ, զարձյալ Հյուսիսային Օսեթիայից, հայտնաբերվել են Գորցի և Ֆատկաուի գամբարաններում[56], սակայն արտաք ձևով մի փոքր տարբեր են Էշմիածնի կացնից։ Էշմիածնի կացինն իր զուգահեռներն ունի նաև Աբխազիայում, Կյուր-Դերեում՝ Էշերիի գոյմեններում հայտնաբերված նյութերում, Արաքելյան տոհմիցայի նյութերում[57]։ Բ. Ա. Կուֆտինը գտնում է, որ արխազական և բնչհանրապես կովկասյան գոյմենները կառուցվել են հնագույն բրոնզից դեպի միջին բրոնզի անցման շրջանում և թվագրում է III հազարամյակի վերջով և II հազարամյակի սկզբով[58]։

Այսպիսով, Էշմիածնի կացինը թեև ուղեկցող նյութեր չունի, բայց առնչվում է մի կողմից Կարապի կացնի հետ, իսկ մյուս կողմից՝ Բ. Ա. Կուֆտինի թվագրած արխազական գոյմենների ստորին շերտի ժամանակաշրջանի նյութերի հետ և, հավանաբար, երևան է գալիս Էլբրուսի տիպի կուլտուրայից անմիջապես հետո, այսինքն՝ հնագույն բրոնզից դեպի միջին բրոնզի անցման շրջանի նյութերի հետ։ Կարապի կացինը, համապատասխանելով Էլբրուսի կուլտուրայի վերջին շրջանին, փոքր-ինչ նախորդել է Էշմիածնի կացնին։

Վերը բերված փաստերը, կացինների տիպերի զարգացման ժամանակագրական հաջորդականությունը հավաստելով, միաժամանակ նշում են կախարդական կացինների տարածման ուղղությունը հարավից հյուսիս։

Այսպիսով, ինչպես տեսանք, հնագիտական պեղումների միջոցով ձեռք բերված նյութերն ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհում մետաղամշակման գործը զգալի հաջողություններ է հասնում հատկապես հնագույն բրոնզի գարաշրջանում, երբ պղնձի սառը ֆորմն իր տեղը զիջում է նրա ձուլմանը քարե կամ կավե կաղապարներում, որով և սկիզբ է դրվում իսկական մետաղագործության զարգացմանը։ Այս փաստերն անառարկելի են դարձնում Հայկական լեռնաշխարհի՝ վերը նկարագրած նյութերի տեղական արտադրությունը։

Բերված զուգահեռները (Հին Արևելքի կուլտուրայի, Վրաստանի և Հյուսիսային Կովկասի նյութերի հետ) միաժամանակ ապացուցում են, որ Հայկական լեռնաշխարհը III հազարամյակի II կեսում սերտ փոխադարձ կապերի և փոխհարաբերությունների մեջ է եղել նշված երկրների հետ և հանդիսացել է մի կամուրջ, որի վրայով հարավի կուլտուրան փոխանցվել է հյուսիս։

Է. ԽԱՆԶԱԴՅԱՆ

ԽԱՅԱՍԱ-ԱԶԶԻ ԻՆ ՆՐԱ ՄԻ ՔԱՆԻ ԲՆԱԿԱՎԱՅՐԵՐԻ ՏԵՂԱԴԻՐՄԱՆ ՀԱՐՑԻ ՇՈՒՐՋԸ

Խայասա-Ազզի (Ḫalaša-Azzi)

Խեթական աղբյուրների հաղորդած վկայությունները ցույց են տալիս, որ թե՛ քաղաքական, թե՛ տերիտորիալ առումով Խայասան և Ազզին իրենցից ներկայացնում են միևնույն երկիրը։ Այս համանմանությունը ակնհայտորեն երևում է խեթական թագավոր Մուրսիլ II-ի տարեգրության մեջ, երբ հիշատակվում է այն մասին, թե ինչպես խեթական զորքերի հրամանա-

---

[54] Е. И. Крупнов, Материалы по археологии Северной Осетии докубанского периода, МИА, № 23, 1951, էջ 39, նկ. 7₈։

[55] Բ. Ա. Կուֆտին, նշվ. աշխ., էջ 305, նկ. 8։

[56] Ս. Ի. Կրուպնով, նշվ. աշխ., էջ 38—39։

[57] М. М. Иващенко, Исследование архаических памятников материальной культуры в Абхазии, Тифлис, 1935, էջ 15, 27—29, նկ. IX₁. Б. А. Куфтин, Материалы по археологии Колхиды, I, 1949, Тб., էջ 288, табл. XXX₁, էջ 301, նկ. 65₃։

[58] Б. А. Куфтин, К вопросу о древнейших корнях грузинской культуры на Кавказе по данным археологии, էջ 305։

տար Նուվանցան Ազզի երկրի մարդկանց Կանանուվարա քաղաքի տակ հաղթեց։ Նույն տարի որությունի մեկ այլ տեղում խեթական թաղավորը արձանագրում է, որ Նուվանցան Կանանուվարա քաղաքի տակ հաղթեց Խայասա երկրի մարդկանց։ Այս համանմանությունն առաջին անգամ նկատել է Է. Ֆորերը[2], որին հետագայում նոր փաստերով պաշտպանեց Ա. Գյոտցեն[3]։

Խայասա-Ազզիի ճիշտ տեղադրության հարցը մինչև այժմ էլ դիտական մեծ վեճերի տեղիք է տալիս։ Դեռևս 1931 թ. Է. Ֆորերի հայտնած կարծիքը Խայասա-Ազզին Բարձր Հայքում տեղադրելու մասին լայն ճանաչում է գտել արևելագետների մեծ մասի մոտ[4]։

Ելնելով Մուրսիլ II-ի տարեգրության այն մասից, որտեղ պատմվում է Խայասայի ծովի ափին գտնվող Դրիպսա քաղաքի մասին, արևելագետների մի որոշ մասը մինչև այժմ էլ հակված է Խայասա-Ազզին միջերկրածովյան շրջանում տեղադրելու։ 1927 թ. իր հոդվածներից մեկում Ա. Գյոտցեն Խայասա-Ազզին տեղադրում էր Տրապիզոնից հարավ-արևելք ընկած միջերկրածովյան շրջանում[5]։ Սակայն հետագայում իր մի շարք ուսումնասիրություններում վերանայելով այդ տեսակետը, նա Խայասա-Ազզին տեղադրում է Եփրատ, Ճորոխ և Հալիս գետերի ավազանում և վերջապես՝ միմիայն Եփրատի շրջանում[6]։

Խայասա-Ազզին Սև ծովի հարավային ափերին են տեղադրում նաև Լ. Դելապորտը[7], Ֆ. Կոռնելիուսը[8], Ջ. Գարստանգը[9] և շատ ուրիշներ։

Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ Ազզին Հայկական լեռնաշխարհում չպետք է տեղադրվի, առավել ևս սխալ է այն կարծիքը, թե այն հարկավոր է որոնել Վանի ավազանում։ Նա Ազզին տեղադրում է Սամսունի շրջանում[10]։ Ջ. Գարստանգը, հակված լինելով նույն կարծիքին, Ազզին տեղադրում է Կերասունդի շրջանում։ Է. Կավենյակը իր վաղ շրջանի ուսումնասիրություններում Խայասա-Ազզիի հարավային սահմանները սկսում է Երզնկա-Կարին ուղիղ գծով, որը հյուսիսում հասնում է ընդհուպ Սև ծովի ափերը[11]։ Սակայն ի վերջո նա հանգում է այն եզրակացության, ըստ որի Խայասա-Ազզին տեղադրվում է Եփրատի ավազանում[12]։

Ուսումնասիրողներից Ա. Զախարովը Խայասան տեղադրում է Մեծ Հայքում[13]։

Ի հակադրություն վերոհիշյալ արևելագետների տեսակետների, այս հարցում իրենց ուրույն կարծիքն ունեն հայ պատմաբանները, որոնք իրավացիորեն, գիտական փաստարկումների հիման վրա ցույց են տալիս, որ Խայասա-Ազզին պետք է որոնել միմիայն Հայկական լեռնաշխարհում։

Խայասա-Ազզին իրոք Հայկական լեռնաշխարհում տեղադրելու մասին են վկայում նույն խեթական աղբյուրները։ Այսպես օրինակ՝ Մուրսիլ II-ը Խայասա-Ազզիի վրա արշավելու հա-

---

[1] E. Forrer, Die Boghazköi-texte in Umschrift; Leipzig. 1926, II, հատ. 42, 53 A § 91, 58 B, § 91, § 94 (այսուհետև՝ 2 BoTU).

[2] E. Forrer, Hajasa-Azzi, „Caucasica", 1931, fasc. 9, էջ 2։

[3] A. Goetze, Kizzuwatna and the Problem of Hittite Geography, London, 1940, էջ 19, ծան. 75։

[4] E. Forrer, աշխ. աշխ։ Ս. Տ. Երեմյանը ևս իր Ուրարտուի քարտեզում Խայասա երկիրը տեղադրում է Բարձր Հայքում և Փոքր Հայքի հյուսիսային մասում։ Տե՛ս Հայկ. ՍՍՌ Ատլաս, Երևան Մոսկվա, 1961, էջ 102։

[5] A. Götze, Zur Geographie des Hethiterreichs, „Kleinasiatische, Forschungen", 1927, Bd. I, Hf. 1, էջ 114։

[6] A. Götze, Kleinasien, München, 1933, էջ 95; նույնի՝ Kizzuwatna and the Problem of Hittite Geography, էջ 19—22։

[7] L. Delaporte, Les Hittites, Paris, 1929, էջ 40, 168, քարտեզներ I—II։

[8] Fr. Cornelius, Zur hethitischen Geographie: die Nachbarn des Hethiterreiches, „Revue hittite et asianique", 1958, t. XVI, № 62, էջ 3։

[9] J. Garstang and O. R. Gurney, The Geography of the Hittite Empire, London, 1959, էջ 37—48։

[10] Fr. Cornelius, Geographie des Hethiterreiches, „Orientalia", 1958, vol. 27, fasc. 3—4, էջ 239։

[11] E. Cavaignac, L' extension de la zone des Gasgas a l'Ouest, „Revue hittite et asianique", 1931, fasc. 4, էջ 103—105։

[12] E. Cavaignac, La place du Pala et du Tumanna, „Revue hittite et asianique", 1936, t. VI, 22(23), էջ 176։

[13] А. Захаров и Ж. Конгено, Хетты и хеттская культура, Москва, 1924, էջ 105։

մար Կարբեմիշից դեպի հյուսիս, դեպի Բեղարամա քաղաքը (Մալաթիայից հյուսիս արևմուտք) և միայն այնտեղից հարձակվում Խայասայի վրա։ Խայասան սահմանակից էր նաև Իսուվա երկրին։ Սրա մասին են վկայում խեթական այն բնագրերը, որտեղ հիշատակվում են մի քանի քաղաքներ թե՛ Խայասա-Ազզիի, թե՛ Իսուվայի կազմում (խայ. Հուկկամմա, խուվ. Դուկկամմանա, խայ. Արիխտա, խուվ. Արիխաա)[14]։

Միանգամայն հիշտ է նաև հայագիտների այն մոտեցումը, երբ իր հերթին փորձ է արվում միմյանցից անջատ տեղադրել և՛ Խայասան, և՛ Ազզին։ Ն. Ադոնցը Խայասան տեղադրում է Եփրատի վերին հոսանքներում, Կամախից մինչև Կարին, ներառյալ Երզնկայի դաշտը, բնդհուպ մինչև Դերսիմի լեռնային գանգվածը[15]։ Ակադ. Դ. Լափանցյանը այն տեղադրում է Եփրատի, Ճորոխի և Արաքսի վերին հոսանքներում։ Միաժամանակ նա Անի-Կամախից 25 կմ հեռավորության վրա, Երզնկայից Ակն տանող ճանապարհի այդ մասում գտնվող Խասա (Xasa) գյուղանվան մեջ գտնում է Խայասա անվան հնչյունային ձևված ձևը[16]։ Դ. Ղափանցյանը մինչև այժմ պահպանված տեղանունների ստուգաբանման միջոցով դանկանում էր (ոչ (ձ) գեղանվան մնացուկներ գտնել Խայախա (Hajaha), Խայվար կամ Խայավար (Hajavar), Խայինա (Hajina), Խայիթա (Hajita), Խայբեր (Haiber) բնակավայրերի անունների մեջ։

Խայասայի տեղադրման հարցում միանգամայն այլ մոտեցում է ցուցաբերել ակադ. Հ. Մանանդյանը։ Խիստ քննադատության ենթարկելով Է. Ֆորերին, Ն. Ադոնցին և Գ. Ղափանցյանին, նա գտնում է, որ բավարար հիմքեր չկան Խայասան Բարձր Հայքում տեղադրելու համար։ Ըստ Հ. Մանանդյանի, Խայասայի սահմանները հյուսիսում հասնում էին մինչև Մնձուր լեռնային զանգվածի հյուսիսային փեշերը, այսինքն՝ ներկայիս Դերսիմի սահմանները. արևելքում՝ հավանաբար մինչև Վանա լճի հյուսիս-արևելյան ափերը, հյուսիս-արևմուտքում՝ մինչև Երզնկայի դաշտը, իսկ արևմուտքում Խայասան սահմանակից էր Ակնին[17]։ Այսպիսով, Մանանդյանը փաստորեն պաշտպանում է ժամանակին Հ. Տաշյանի կողմից հայտնված տեսակետը[18]։

Ն. Մարտիրոսյանը Խայասան տեղադրում է Դերսիմի հարավային մասում և ողջ Խարբերդի դաշտի շրջանում, վերջինս համարելով հայ ժողովրդի կազմավորման ու ձևավորման ամենահիմնական օջախը Հայկական լեռնաշխարհում[19]։

Հավանաբար, Խայասայի կենտրոնը (համանուն Խայասա քաղաքը) պետք է որոնել Երզնկայի շրջանում և հավանաբար Խայիք կամ Խայնք գյուղի տեղում։ Հարկ ենք համարում նշել, որ XV դարի (1403) մի ավետարանում Երզնկայի հետ միասին հիշատակվում է նաև այդ Խայիք (Hajikh) գյուղը, որը գտնվում է Բայբուրդից 40 կմ հարավ-արևմուտք, Գյոլլու-Խայնք փոքրիկ գյուղի կողքին[20]։

Ուսումնասիրողների մեծ մասը տեղադրական տեսակետից իրարից չանջատելով Խայասա և Ազզի միավորումները, քիչ ուշադրություն է դարձրել վերջինիս տեղադրման հարցերին։ Արևմտաեվրոպական արևելագետները հիմնականում, ինչպես տեսանք, Ազզին տեղադրում են մերձպոնտական շրջանում և այն համարելով ցեղերի անվանում, չեն էլ փորձում որևէ բնակավայր որոնել այդ տերիտորիայում։ Ն. Ադոնցը, հետագայում նաև Գ. Ղափանցյանը, Ազզին համադրում են Փոքր Հայքում գտնվող հռոմեական ժամանակաշրջանի Ազա քաղաքի հետ[21], որը, ըստ Պեվտինգերյան քարտեզի, գտնվում է Նիկոպոլսի և Սատալայի (Սատաղի) միջև, վերջինից 40 կմ արևմուտք, որը հայտնի է նաև Խազա (Հասիս) անունով (Պեվտինգերյան քարտեզի Կունիսսա և Զիգիոլա կայարանների միջև[22]։ Մեր կարծիքով Ազզիի տեղադրման հարցում արժեքավոր վկայություն է տալիս XVII դարի հայ մատենագիր Հակոբ Կարնեցին, որն իր

---

[14] E. Forrer, Hajasa-Azzi, էջ 19—20։

[15] N. Adontz, Histoire d'Arménie, Paris, 1946, էջ 31։

[16] Г. Капанцян, Хайаса– колыбель армян, Ереван, 1947, էջ 39։

[17] Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении. Ереван, 1959, էջ 73, 118։

[18] Հ. Տաշյան, Հաթեր և ուրարտյանք, «Հանդես ամսօրյա», 1931, էջ 626—627։

[19] Ն. Մարտիրոսյան, Խարբերդի շրջանները՝ հայոց հնագույն օրրանը, «Խարբերդ և իր ոսկեղեն դաշտը» հուշամատյանում, 1957, նույնի՝ Գրպտումներ փոքրասիական անուններու մասին, «Պատմա-բանասիրական հանդես», 1961, № 3(4), էջ 98—108։

[20] Լ. Խաչիկյան, ԺԵ դարի հայերեն ձեռագրերի հիշատակարաններ, Երևան, 1955, մասն Ա, էջ 39։

[21] Гр. Капанцян, Историко-лингвистические работы. Ереван, 1957, էջ 43։

[22] Н. Адонц, Армения в эпоху Юстиниана, С. Петербург, 1908, էջ 78—79։

Տեղեկագիր վերին Հայոց» աշխատության մեջ խոսելով Կամախից հարավ և արևմուտք ընկած դավառների մասին, հիշատակում է նաև Ղուռուչան գավառը, որը «...երկիր խոր և թաւամայրի, ի գրոց Ազնցիք ասեն...»-[3]։ Հակոբ Կարնեցու կողմից հիշատակվող Ղուռուչան գավառի շրջանում էլ մենք տեղադրում ենք Ազգին, որը տարածվում էր Մնձուրի լեռների ստորոտներից մինչև Տուժիկի լեռները։ Այսպիսով Ազգին պետք է որոնել ոչ թե բուն Խայասայից հյուսիս, մերձպոնտական շրջանում, այլ ընդհակառակն՝ Խայասայից հարավ՝ մինչև Իսուվայի սահմանները։

Արիպսա (Aripša)

Արիպսա քաղաքը հիշատակվում է խեթական աղբյուրներում, կապված Մուրսիլ II-ի երկրորդ արշավանքի հետ դեպի Խայասա-Ազգի։ Ինչպես վկայում է Մուրսիլ II-ի տարեգրությունը, խեթական թագավորը իր զորքերը կենտրոնացնելով Ինգալավա քաղաքում, Խայասա-Ազգիի դեմ երկրորդ արշավանքը սկսում է՝ հարձակվելով Արիպսա քաղաքի վրա, որը «ծովի մեջ էր գտնվում» (URU A-ri-ip-ša-aš ŠA(G)A.AB.BA ki-it-ta-ri)[24]։

Խեթական բնագրում Արիպսայի այսպիսի նկարագրությունը ուսումնասիրողների մեջ առաջ բերել տարբեր կարծիքներ։ Է. Ֆոռերը սխալմամբ (հետագայում նա վերանայեց իր այս տեսակետը) հիմք ունենալով խայասական այս քաղաքի դիրքը և վկայությունն այն մասին, որ նա գտնվում է ծովի մեջ ու շրջապատված է ժայռերով, փորձեց ընդհանրապես գծել Խայասա-Ազգիի սահմանները, գտնելով, որ այն պետք է տեղադրվի Սև ծովի հարավում, Տրապիզոնից Հարավ-արևելք ընկած շրջանում։ 1927 թ. Է. Ֆոռերի այս տեսակետը իր պաշտպանությունը գտավ Ա. Գյոտցեի կողմից[25]։ Հետագայում վերանայելով իր կարծիքը, Է. Ֆոռերը փորձում է Արիպսան որոնել Վանա լճի արևմտյան ափին, Կիզվան-Դաղ կոչվող վայրում[26]։

Արիպսան Սև ծովի ափին տեղադրելու տեսակետի շուրջ պաշտպաններից են Ջ. Գարստանգը և Օ. Գերնեյը[27]։ Արիպսան նույնացնելով Սև ծովի ափին գտնվող ժամանակակից Այրեսունի (Aresun) քաղաքի անվան հետ, նրանք այն տեղադրում են Կերասունդի տեղում, որտեղ նույնպես ժայռոտ լեռներ կան։

Արիպսայի տեղադրման հարցում միանգամայն տարբեր կարծիքներ են հայտնել Ն. Ադոնցը, Գ. Ղափանցյանը և Հ. Մանանդյանը։

Ն. Ադոնցը Արիպսան ձգտում է որոնել Արարկիրից արևելք, Եփրատի ափերի մոտ ընկած ճահճային շրջանում։ Այլ մոտեցում է ցուցաբերում Գ. Ղափանցյանը, որն իրավացիորեն ցանկանում է պարզեցնում մտցնել այդ հարցում։ Գ. Ղափանցյանի հարցադրումը հանգում է Նրան, թե արդյոք խեթական բնագրի «Արիպսա քաղաքը ծովի մեջ էր գտնվում» արտահայտությունը պետք է բառացի հասկանալ։ Գ. Ղափանցյանի կարծիքով խայասական Արիպսան կարելի է տեղադրել Արաքսի վտակ Մուրցի ակունքները կազմող լճի մոտ գտնվող Բերդակ կամ Քյոսե-Մեհմեդ գյուղի տեղում, Էրզրումի ճահիճների հենց կողքին, որտեղ մ. թ. VI դ. հիշատակվում է Արարեսոս գյուղը։ Էրզրումի մոտ գտնվող այդ լիճ-ճահիճը ներկայումս ունի 15 կմ երկարություն և 5 կմ լայնություն։ Վերջնականապես Արիպսան տեղադրելով Էրզրումի շրջանում գտնվող այդ լճի ափին, Գ. Ղափանցյանը միաժամանակ նշում է Փոքր Հայքի արևմտյան մասում, Սեբաստիայի և Նիկոպոլի մոտ հիշատակվող Արարիսոս (Arabisos) կամ Արեպսուն (Arepsun) վայրը (ներկայիս Նիկսարի շրջանում), որը հնչյունական նմանություն ունի խայասական այդ տեղանվան հետ[30]։

---

[3] Վ. Ա. Հակոբյան, Մանր ժամանակագրություններ (XIII—XVIII դդ.), Երևան, 1956, հատ. 2, էջ 532։

[24] 2BoTU, 58B, § 103.

[25] A. Götze, Zur Geographie des Hethiterreichs, „Kleinasiatische Forschungen", 1927, Bd. I, Hf. 1, էջ 114։

[26] E. Forrer, Hajasa-Azzi, էջ 15։

[27] J. Garstang and O. R. Gurney, The Geography of the Hittite Empire, էջ 38։

[28] N. Adontz, Histoire d'Arménie, էջ 39–40։

[29] Г. Капанцян, Историко-лингвистические работы, էջ 56։

[30] Նույն տեղում։

Հ. Մանանդյանը հերքելով Ն. Ադոնցին և Գ. Լափանցյանին գտնում է, որ Է. Ֆոռերի կողմից Արիպսայի տեղադրումը Վանա լճի հարավ-արևմտյան մասում, նրա թերակղզիներից մեկի վրա, միանգամայն ճիշտ է և ցանկանում է զարգացնել ու հիմնավորել այդ տեսակետը[31]։

Սեր կարծիքով միանգամայն սխալ է Արիպսայի տեղադրումը Սև ծովի շրջանում։

Արիպսայի տեղադրման հարցում զգալի պարզություն կարող է մտցնել Դուկկամմա (Dukkamma) քաղաքի ճիշտ տեղադրումը, որը հիշատակվում է նույն Մուրսիլ II-ի տարեգրության մեջ։ Ինչպես վկայում է Մուրսիլ II-ը, Արիպսան գրավելու հաջորդ օրը նա հարձակվում է Դուկկամմա քաղաքի վրա և նվաճում այն։ Պատկածից վեր է, որ Դուկկամմա քաղաքը երբեք մեծ հեռավորության վրա չէր կարող գտնվել Արիպսայից։

Ինչպես ճիշտ նկատել է Է. Ֆոռերը, Իսուվայի և խեթերի միջև կնքված մի դաշնագրում Դուկկամմա քաղաքը հանդես է գալիս Դուկկամմանա ձևով, հետևաբար այն Իսուվայի քաղաքներից էր[32]։ Այսպիսով մենք կարողացանք պարզել մի շատ կարևոր հանգամանք, այն է՝ Դուկկամմա քաղաքը գտնվում էր Իսուվայում, այսինքն պատմական Մոփք գավառի կամ ներկայիս Խարբերդի շրջանում։

Խեթերի և Իսուվայի միջև կնքված այս դաշնագրում Դուկկամմանա քաղաքի կողմից հանդես են գալիս Այիսսիյա (Ajiššijaš) և Արիխբիցցի (Ariḫbizziš) անձնավորությունները։ Մեզ թվում է, որ Ariḫbizziš անվան մեջ թաքնված է Aripša քաղաքի անունը։ Իսուվական այս անձնանվան ստուգաբանումն էլ կարծես խոսում է մեր այս թեզի օգտին։ Arihbizzi անձնանունը բաղկացած է երկու հիմնական մասերից։ Ուսումնասիրողներից Գ. Պուտվեսը, որի հետ համամիտ չէ Գ. Լափանցյանը, այս անվան առաջին մասը՝ Ariḫ-ը առաջացած է համարում Arip ձևից, երբ նախորդ „p"-ն ասիմիլյացիայի է ենթարկվել հետագա „h"-ից[33]։ Անվան երկրորդ մասը՝ bizzi-ն, որը հատկապես հանդես է գալիս խուրրիական անձնանուններում biz || piz ձևերով, մի շարք ուսումնասիրողների (Ենսեն, Մեսսերշմիդտ, Սպեյզեր) կարծիքով տալիս է նաև √ pis տարաձևը, որը Ց. Ֆրիդրիխը կապում է ուրարտական pişuše «ուրախություն» բառի հետ[34]։ Ariḫbizzi-ի և Aripša-ի նմանությունը նկատել նաև Գ. Ջահուկյանը[35]։

Դուկկամմայից ոչ շատ հեռու գտնվող Արիպսան ամենայն հավանականությամբ նույնպես գտնվում էր Իսուվայում։ Մեր այս տեսակետի օգտին է վկայում նաև Ինգալավա քաղաքի ճիշտ տեղադրությունը։

Ինչպես արդեն վերևում նշեցինք, Մուրսիլ II-ը իր արշավանքը Արիպսայի դեմ սկսում է Ինգալավա քաղաքից, որտեղ կենտրոնացված էին խեթական զորքերը։ Ինգալավա քաղաքի երկիրը, որը հունա-հռոմեական աղբյուրներում հանդես է գալիս իբրև առանձին գավառ՝ Անգելենա, իսկ հայկական աղբյուրներում՝ Անգեղտուն ձևով, գտնվում է Արևմտյան Տիգրիսի ակունքների շրջանում։ Այստեղ է մինչև այժմ հայտնի Ակլ գյուղը, որը պիտի լինի Ինգալավա քաղաքի տեղում։ Հայկական լեռնաշխարհի հարավում գտնվող Ինգալավայից դեպի Խայասա-Ազզի երկիրը արշավելու համար խեթերը պետք է շարժվեին հյուսիս, այսինքն ճանապարհն անցնելու էր Իսուվայի վրայով, ներկայիս Խարբերդի դաշտով։ Ինգալավայի այսպիսի տեղադրությունն էլ է բացատրվում, եթե նույնիսկ ընդունելու լինենք Սև ծովի հարավային ափին գտնվող Արիպսայի վրա Հայկական լեռնաշխարհի հարավից հարձակում գործելու փաստը, քանի որ խեթական զորքերը դեպի Սև ծով կարող էին արշավել Հալիս գետի ավազանից հյուսիս ձգվող ճանապարհով։

Հակված լինելով Արիպսան, ինչպես և Դուկկամման Իսուվայում տեղադրելու տեսակետին, մեզ մնում է Արիպսան որոնել միայն այս շրջանում գտնվող լճերից որևէ մեկի ափին։ Հավանաբար այն գտնվում էր Խարբերդից ոչ հեռու գտնվող Մոփք լճի (Ներկայիս Գյոլջուկ) ափին և հանդիսանում էր Խայասա-Ազզիի պաշտպանված բնակավայրերից մեկը՝ նրա հարավային սահմանի վրա։

---

[31] Я. А. Манандян, О некоторых спорных проблемах истории древней Армении, էջ 101։

[32] E. Forrer, Hajasa-Azzi, էջ 19—20։

[33] Gelb J., Purves P., Mac Rael, Nuzi Personal Names, Chicago 1943, էջ 204։

[34] Г. Капанцян, Историко-лингвистические работы, էջ 77։

[35] G. B. Jahukyan, The Hayaša Language and its Relation to the Indo-European Languages, „Archiv orientalni", № 29, 1961, էջ 373։

Արմատանա (Armatana)

Արմատանա երկիրը, ինչպես մենք ենթադրում ենք, մտնում էր Խայասա-Ազզիի կազմի մեջ և որպես առանձին ցեղային միություն զգալի վտանգ էր սպառնում հարևան խեթերին։ Արմատանայի տեղադրման հարցը նույնպես վիճելի է համարվում արևելագիտության մեջ։ Խեթական աղբյուրների սակավաթիվ վկայություններում ևս Արմատանայի ճիշտ տեղադրումը չի արտացոլվում։ Խեթական թագավոր Սուպպիլուլիումայի և Միտանիի թագավոր Մատիվազայի միջև կնքված դաշնագրում հիշատակվում է, որ 15 երկրներ, այդ թվում և Արմատանա երկիրը, ապստամբեցին Թուդխալիա III խեթական թագավորի դեմ։ Ապստամբ երկրների այդ ցուցակում Արմատանա երկիրը հիշատակվում է վերջում[36]։ Խեթական մեկ այլ բնագրում հիշատակվում է, թե ինչպես հեռվից թշնամի Արմատանա երկիրը հարձակվեց Խաթթի երկրի վրա և ջողոպտեց այն, իսկ Կիղուվադնա երկիրը դարձրեց իր սահմանը։ Ա. Գյոցեն Արմատանան տեղադրում է հարավում, մինչև Կիլիկիայի սահմանները, Թեգարամա երկրից հարավ[37]։ Այս կարծիքին էր նաև Օ. Գիրնեյը, որը, սակայն, հետագայում վերանայեց իր տեսակետը[38]։ Ջ. Գարստանգը և Օ. Գիրնեյը Արմատանա երկիրը տեղադրում են Մելիտենեի և Սամոսատի միջև մի ինչ-որ տեղում, Արավանա երկրի սահմանակից շրջաններում[39]։ Ուսումնասիրողներից Ֆ. Կոռնելիուսը գտնում է, որ Արմատանա երկիրը պետք է որոնել ծայրագույն հարավ-արևմուտքում, դաշտային Կիլիկիայի շրջանում, Ադանայի և Տարսոնի մոտ[40]։ Նա այս կարծիքին է հանգում հիմնականում այն պատճառով, որ խեթական մի բնագրում Արմատանա երկիրը հիշատակվում է Ծունախարա (Zunaḫara) երկրի հետ միասին, իսկ մեկ այլ պաշտամունքային բնագրում վերջինս հանգես է գալիս Ագանիյա և Տարսա երկրների հետ, որոնք տեղագրվում են ներկայիս Ադանայի և Տարսոնի տեղում։ Նա Արմատանան վերջնականապես տեղադրում է Կիլիկիայում գտնվող Ռամիթա բնակավայրի տեղում[41]։

Մեր կարծիքով ճիշտ է մի շարք հայագետների այն տեսակետը, թե Արմատանա երկիրը պետք է փնտրել Հայկական լեռնաշխարհի հյուսիս-արևելյան ծայրամասում։ Հայկական լեռնաշխարհում քիչ չեն ԱՐՄ արմատն ունեցող տեղանունները։ Այսպես, օրինակ, Արմաշ անունով գյուղ է հանդիպում Փոքր Ասիայում (Իզնիմիր գավառ), Արմրջան, Արմրճան կամ Արմուճան գյուղ՝ Ջորրորդ Հայքում (Բալուի շրջան), Արմիղան գյուղ՝ Վասպուրականի Արճեշ գավառում, Արմշատ գյուղ՝ Վանի նահանգի Շատախ գավառում, Արմութաղ գյուղ՝ Տիվրիկի գավառում, Արմուտան կամ Արմտան գյուղ՝ Բարձր Հայքում, Դարանաղի (Կամախի) գավառում[42]։ Հատկապես ուշադրության արժանի է վերջին տեղանունը։ Ն. Մարտիրոսյանը գտնում է, որ Արմատանա երկրի անունը պահպանվել է հայաբնակ Արմտան տեղանվան մեջ[43]։ Ներկայումս պահպանվել են Արմտան անունով երկու գյուղ (մեծ և փոքր), որոնք գտնվում են Ղուռուչայ գավառակում, երբեմնի հայաբնակ Զիմտոտ և Բինկյան գյուղերից ոչ շատ հեռու։ Հենց այստեղ էլ, ըստ Ն. Մարտիրոսյանի, պետք է տեղագրվի Արմատանա երկիրը։ Արմատանա գյուղի մասին հայ մատենագրության մեջ պահպանված ամենահին տեղեկությունը պատկանում է XVII դարի մատենագիր Հակոբ Կարնեցուն, որն իր «Տեղեկագիր վերին Հայոց» աշխատության մեջ հիշատակում է. «...Եւ գնացեալ հասանէ մինչ ի Քարաձոր Յակնայ և Արտրկերու։ Եւ յետ կոյսն ունի Կամախ Գ(3) գավառս՝ հոռանօվայ որ բաղում գիւղք կան և Արմտաններն, որ գնացեալ հասնէ մինչև իր Տիւրիկէ և միւսն է Ղռուչան, երկիր խոր և քաւամայրի, որ ի գրոց Աղնցիք ասեն...»[44]։

---

[36] E. weidner, Politische dokumente aus Kleinasien die Statsvertrage in Akkadischer Sprahe aus dem Archiv von Boghazköi, 1923, էջ 5—7։

[37] A. Götze, Kizzuwatna...., էջ 23—26։

[38] O. R. Gurney, The Hittites, London, 1952, էջ 27—28։

[39] J. Garstang and O. R. Gurney, The Geography...., էջ 44—45։

[40] Fr. Cornelius, Geographie...., „Orientalia", 1958, vol. 27, fasc. 3, էջ 240։

[41] Fr. Cornelius, Revue hittite et asianique, 1958, t. XVI, № 62, էջ 6—7։

[42] Ս. Էֆրիկյան, Բնաշխարհիկ բառարան, Վենետիկ, 1900, հատ. 1, էջ 301—302, 307։

[43] Ն. Մարտիրոսյան, Գրաբարյան փորձառական անուններու մասին, «Պատմա-բանասիրական հանդես», № 3(4), 1961, էջ 92—93։

[44] Վ. Ա. Հակոբյան, Մեր ժամանակագրություններ (13—18-րդ դդ.), Երևան, 1956, հատ. 2, էջ 332։

Հնդիկներն մի քանի բնագրերում Արմատանան հիշատակվում է Խայատայի հետ միասին։ Սակայն ֆարսին հուշում է Խայատայի սահմանամերձ շրջաններում էլ գտնել։

Պրոֆ. Ռ. Գրեմյանը Արմատանա երկիրը տեղադրում է Կամախիզ ոչ հեռու գտնվող Արմրատան գյուղի շրջանում և այն համարում Խայատայի մարգերից մեկը[16]։ Արմատանա հայրի տյուսանան տեղադրումը միանգամայն հավանական է և իրոք այդ շրջանում էլ պետք է գտնել այն, այսինքն՝ Կամախի (Կումմախայի) և Տիվրիկի միջև։

Լ. ԹԱԼՈՒԽՈՂՅԱՆ

АРМЯНЕ В ИНДОНЕЗИИ

В начале XVII в., в период насильственного переселения армян шахом Аббасом из Армении в Иран, происходила интенсивная эмиграция армян в страны Юго-Восточной Азии, в частности в Индию, Бирму, Индонезию. Армяне начали поселяться в Индонезии в первой половине XVII в. и в дальнейшем образовали небольшую по численности (количество армянского населения в стране доходило до 2000 чел.)[1] колонию.

В армянской советской историографии нет специальных работ, освещающих историю армянской колонии в Индонезии. В зарубежной историографии этому вопросу посвящена книга Орданаяна: «История армянской колонии Нидерландской Восточной Индии»[2]. Известный зарубежный арменовед, профессор Аршак Алпоаджян в своем обширном трехтомном исследовании «История армянской эмиграции» останавливается также на истории армянской колонии в Индонезии[3].

Некоторые сведения об армянах-поселенцах в Индонезии имеются в энциклопедиях (см. Encyclopaedia van Nederlandich-Indië s'Gravenhage – Amsterdam-Batavia, т. I, стр. 60; Ensiklopedia Indonesia, Groningen-Djakarta, т. I). Первые армянские поселения в Индонезии были образованы на острове Ява индийскими армянскими купцами из Мадраса[4]. Так, в отчете Ост-Индской торговой компании за 1656 г. есть упоминание о поселении армянского купца по имени Ходжа Солимха в гор. Магосар[5]. О поселении армян в Батавии свидетельствуют надгробные камни XVIII в. на местном общественном кладбище[6]. Имеются данные, свидетельствующие о том, что среди первых поселенцев-армян в Индонезии были купцы из Амстердама[7]. Ост-Индская компания эдиктом от 31 марта 1747 г. утвердила привилегии армян в Индонезии, подобно европейцам, как «свободных граждан». Еще в 1638 г. армянский купец Ходжа Панос Калантар заключил договор с Ост-Индской компанией на получение права свободного гражданства для поселенцев-армян[8].

---

[15] H. G. Güterbock. The Deeds of Suppiluliuma as Told by his Son, Mursili II, „Journal of Cuneiform Studies", 1956, vol. X, № 3, fr. 24.

[16] Հայկ. ՍՍՌ Ատլաս, Երևան—Մոսկվա, 1961, Ս. Երեմյան, Ուրարտու պետություն և հարևան երկրները մ. թ. ա. VIII—VII դդ., քարտեզի էջ 102։

[1] См. М. М. Бакунин. Тропическая Голландия. Пять лет на острове Яве. СПб., 1902, стр. 193.

[2] Ե. Երգանդանյան, Նիդեռլանդական Արևելյան Հնդկաստանի հայ գաղութի պատմությունը սկզբից մինչև մեր օրերը. Иерусалим, 1937.

[3] Ա. Ալպոյաճյան, Հայ գաղթականության պատմություն. հայերի ցրումը աշխարհի զանազան մասերը. т. III, Каир, 1961, Հոլանդական Արևելյան Հնդկաստանի հայերը (Ինդոնեզիա), стр. 447—473.

[4] Ե. Երգանդանյան, указ. соч., стр. 15.

[5] См. Ա. Ալպոյաճյան, указ. соч., стр. 449.

[6] Վ. Աղայան, Պատի օրագույց. Батавия, 1935.

[7] См. Ա. Ալպոյաճյան, указ. соч., стр. 449.

[8] См. там же.